

ՀԱՅԵՐԷՆԻ ԵՒ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՀՆԱԳՈՑՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌՆԶՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՄԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Հայերէնի՝ Հայկական Լեռնաշխարհի հարեւան հին լեզուների հետ ունեցած կապերի եւ ազդեցութիւնների հարցը վաղուց ի վեր եղել է գիտնականների ուշադրութեան կենտրոնում: Այդ լեզուների հետ ունեցած կապերի հիման վրայ կարող են բացայայտուել ոչ միայն հայոց լեզուի, այլեւ հայ ժողովրդի, նրա հոգեւոր եւ նրիթական մշակոյթի հնագոյն պատմութեան բազմաթիւ իրողութիւններ: Այս առումով, յատկապէս արժանաշիշատակ են Գրիգոր Ղափանցեանի, Իգոր Դիակոնովի եւ Գէորգ Ջահուկեանի աշխատութիւնները: Այնուամենայնիւ, Ջահուկեանի վերջին հիմնարար աշխատութեան հրատարակութիւնից¹ աւելի քան քսան տարի է անցել: Ներկայումս հնարաւոր է որոշ ճշգրտումներ կատարել, նոր նրիթեր եւ վերլուծութիւններ աւելացնել եղածին: Մեր այս աշխատութեան ուշադրութեան կիզակէտում է մշակութային յատուկ ծանրաբեռնուածութիւն կրող անուանումների, այդ թւում՝ դիցանունների վերլուծութիւնը, առասպելաբանական եւ մշակութային իրողութիւնների համեմատական քննարկումը եւ ճշգրտումը:

Սոյն յօդուածում քննուում են հայերէնի եւ Հայկական Լեռնաշխարհի հարաւում ու արեւմուտքում տարածուած եւ Ք.ա. Բ. հազարամեակի վերջում անհետացած հնագոյն լեզուների՝ խաթերէնի, խուռերէնի եւ խեթերէնի առնչութիւնների հարցը, որոշ չափով անդրադառնալով նաեւ խեթերէնին ազգակից, բայց մի քիչ աւելի ուշ անհետացած լուվերէնի խնդրին: Խուռերէնին ազգակից ուրարտերէնի հետ հայերէնի յարաբերութիւնը այլ խնդիր է ներկայացնում. նախ, ուրարտերէնն աւանդուած է ոչ թէ Փոքր Ասիայից, այլ հենց Հայկական Լեռնաշխարհից, ապա՝ հայերէնի եւ ուրարտերէնի առնչութիւնները շատ խորն են ու բազմախոտ (հնչիւնաբանութիւն, քերականութիւն, բառապաշար, անձնանուններ, տեղանուններ, դիցանուններ), որակապէս տարբեր հայ-խուռական առնչութիւններից²:

ՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ԽԱԹԵՐԷՆԸ

Հին Փոքր Ասիայից յայտնի հնագոյն լեզուն խաթերէնն է, Փոքր Ասիայի հին բնիկների՝ խաթերի լեզուն (Hattic, Hattian): Ի տարբերութիւն հին անատոլիական լեզուների, այն հնդեւրոպական չէ: Հաւանական է համարուում խաթերէնի ծագումնաբանական կապը հիւսիսարեւմտակովկասեան՝ արխաղա-աղդըական լեզուների հետ³: Այն աւանդուած է խեթական աղբիւրներում, որոշ՝ յատկապէս ծիսական գրութիւններում, թէեւ արդէն վաղ խեթական ժամանակներից՝ Ք.ա. Բ. հազարամեակի առաջին դարերից իր տեղը սկսել է զիջել խեթերէնին եւ պալայերէնին ապա՝ անհետացել, ազդեցութեան հետքեր

թողնելով նրանցում (կրօնի, պաշտամունքի, պետութեան եւ մշակութի հետ կապուած բառերում):

Հայերէնի եւ խաթերէնի հաւանական ընդհանուր բառերից յիշատակելի են հետեւեալները: - ahā-ahā՝ ծիսական մի կանչ, հազաձիմ՝ կերուխումի ետեւից ընկնել-haggazuel՝ մատուռակ, ցմար-zinar՝ երաժշտական մի գործիք, փաղ/paղ-pala՝ համա-⁵, եւ, նաեւ: Սրանց պէտք է աւելացնել երկու բառ. 1՝ hali(ya)ri՝ (ծիսական) երգիչ, որն անբաժանելի է խուռական halmi՝ երգ եւ հայ, խաղ՝ երգ բառերից⁶, եւ 2՝ հաշմ/խաշմ՝ խեղ, կոտրած անգամով, պակասաւոր, համադրելի խաթական դարձութեան աստուած Haš(a)milի հետ⁷ (Բալկաններէց մինչեւ կովկաս դարձութեան աստուածութիւնները պատկերացուել են որպէս հաշմուած, հմմտ.՝ կովկասեան նարթական դիցազնալէպերի դարբին-աստուածներին եւ յուն.՝ Հեփեստոսի կերպարը, որը նոյնպէս խաթական փոխառութիւն է համարուած)⁸: Այս գուգահեռները, որոնք բոլորը չէ, որ միարժէքօրէն ընդունելի են, հիմնականում, հակուած են բացատրելու որպէս միջնորդաւորուած ազդեցութեան արդիւնքներ (հիմնականում՝ խաթերէնից խեթերէն, ապա՝ հայերէն):

Կան նաեւ հայ-խաթական անուանաբանական համընկումներ: Այսպէս, Քսենոփոնը Մշոյ դաշտավայրի գետը՝ Մեղրագետը, անուանում է Teleboas⁹: Այս անունն ակնեբեօրէն համադրելի է teleb/p- արմատով հինանատոլիական անունների հետ, որոնք պէտք է կապուած լինեն խաթական Teleb/pinus, Teleb/pi (կրճատ տարբերակ)՝ դիցանուան հետ: Այս աստուածը հանդէս է գալիս որպէս ամպրոպի աստծու անհետացող որդի, որին կարողանում է գտնել միայն մեղուն (հմմտ.՝ Մեղրագետ-մեղու առնչութիւնը): Մեղրագետի չրջանը՝ Տարօն գաւառը, հին հնչողութեամբ՝ Տարաւն, միանգամայն համեմատելի է խաթական ամպրոպի աստուած Տարուի անուան հետ, որի խեթական ձեւն էր Tarawa: Նախաքրիստոնէական դարաշրջանում Տարօնը պաշտամունքի կենտրոնն էր ամպրոպային յատկանիշներ ունեցող Վահագն աստծու: Հաւանական է համարուում, որ Փոքր Ասիայի հիւսիսարեւելյան չրջանները մինչեւ Հայկական Լեռնաշխարհ, հնում բնակեցուած են եղել խաթերին ազգակից ցեղերով¹⁰: Այս համընկումները ցոյց են տալիս, որ խաթերէնը կամ նրա մի բարբառը, իրօք, հաւանաբար հնում խօսուել է Հայկական Լեռնաշխարհում: Ըստ այդմ, կարող էին լինել նաեւ հայ-խաթական ուղղակի առնչութիւններ¹¹:

ՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ԽՈՒՌԵՐԷՆԸ

Քուուերէնը հին Փոքր Ասիայի ամենատարածուած լեզուներից էր: Քուուական անունները Հիւսիսային Միջագետքում եւ յարակից չրջաններում ի յայտ են գալիս Ք.ա. Բ. հազարամեակի կէսերից, իսկ հնագոյն գրութիւնները՝ մօտաւորապէս Ք.ա. 2000ին: Տարածուած է եղել Հիւսիսային Միջագետքում, Սիրիայում, Հայկական Լեռնաշխարհի հարաւում եւ արեւմուտքում: Քուուական հասարակութեան մէջ նշանակալի է եղել ծագումով հնդարիական վերնախաւի դերը, որի լեզուով են մեկնաբանում խուռական որոշ իշխանաւորների անուններ, դիցանուններ եւ ձիւղարժութեան եզրեր: Քուուերէնը նշանակալի ազդեցութիւն է թողել ուշ-խեթական մշակութի ձեւաւորման վրայ (փոխառուել են եզրեր, դիցանուններ, անձնանուններ): Այն յայտնի է մի քանի բարբա-

ռային տարբերակներով¹²։ Լեզուաբանօրէն ազգակից է ուրարտերէնին, թէեւ դժուար է միաթէք որոշել նրանց մերձաւորութեան աստիճանը։ Տարածուած, բայց եւ այնպէս համընդհանուր ընդունելութիւն չունեցող վարկածի համաձայն խուռերէնը եւ ուրարտերէնը ցեղակից են հիւսիսարեւելակովկասեան՝ նախնան-դադստանեան լեզուներին¹³։

Հայ-խուռական լեզուական առնչութիւնների առաջին հանգամանայից ուսումնասիրութիւնը պատկանում է Ղափանցեանին¹⁴։ Յետագայ ուսումնասիրութիւններից կարելի է յիշել Ջոն Գրեպինի¹⁵, Դիակոնովի¹⁶, Ներսէս Մկրտչեանի¹⁷, Մարգարիտ Խաչիկեանի¹⁸ անդադարձները այդ թեմային։ Եղած նիւթը քննական կերպով ներկայացուած է Ջահուկեանի հիմնարար աշխատութեան մէջ¹⁹։

Ստորեւ ներկայացուած է հայերէնում առաւել հաւանական խուռական ծագման բառերի մի ցուցակ²⁰։ Այսպէս՝ անագ-anagi (նոյն ծագումն ունի ինչ որ ասոր. anāku, չումեր. niggi, naggu հոմանիշները, բայց հայկական ձեւն առաւել մօտ է խուռականին), աստել՝ կին ընտրել, ուզել-ašti՝ կին, խաղող-haluli՝ ինչ-որ պտուղ (նոյնական է ուրարտ. halulին, որը ներկայումս թարգմանւում է որպէս խաղող²¹, եւ հայերէն բառը կարող է ուրարտական փոխառութիւն համարուել), խմճոր-hinzuri՝ նոյն իմաստով, խոռ՝ ժլատ-hurri՝ խուռների ինքնանուանումը, նոռ-nuranti՝ նոյն իմաստով (բառը ծագումով աքադական է եւ հայերէնին կարող էր անցնել նաեւ սեմական աղբիւրից), տուլա՝ եւ տեսակ բոյս-tultu՝ ինչ-որ բոյս։ Սրանց, որոշ կասկածով, աւելացում է եւս մի քանի բառ՝ փոխել-puh՝ նոյն իմաստով եւ քաքալ՝ մի տեսակ խմորեղէն-kakkari՝ նոյն իմաստով (այս բառերը ծագումով աքադական են)։ Ըստ Ներսէս Մկրտչեանի յղուած աշխատութեան, հայերէնում կան մի շարք խուռական բուսանուններ։

Իրականում հայերէնի եւ խուռերէնի բառային ընդհանրութիւններն աւելի շատ են, որոնցից շատերը փոխառութիւններ են աքադերէնից (յաճախ խուռական միջնորդութիւն են ենթադրում հայերէնում մի շարք այլ աքադական բառերի համար, օրինակ՝ ազոռ, կմիք եւն.)։ Հետաքրքրական մի օրինակ է հայ-խաթական առնչութիւնների թւում յիշուած հայ. խաղ՝ երգ բառը, որին միանգամայն համապատասխանում է խուռ. նոյնիմաստ halmín (խուռերէնում -mi-/mmin բառի իմաստը շատ չփոխող վերջածանց է)²²։ Դիակոնովը խուռական ծագում է վերագրում նաեւ հայ. աղիս՝ ցեղ, զարմ, փողովուրդ, աղախիմ եւ ծառայ բառերին։ Թէեւ Ջահուկեանը մերժում է այս համեմատութիւնները, բայց եւ այնպէս, սրանցից առաջինը եւ երկրորդը որոշակիորէն հաւանական են՝ հմտ. խուռ. Allae՝ տիրուհի, որից եւ ենթադրեալ *alla(e)hhi՝ տիրային եւ *alla(e)hhini՝ տնտեսութեան կառավարչուհի²³։ Հայկական ընտանեկան եզրաբանութիւնն առաւել լաւ պահպանուածն է հնդեւրոպականների մէջ²⁴, որն ակնարկում է նաեւ հայկական նահապետական ընտանիքի վաղնջական, հնդեւրոպականին առաւել մօտ վիճակը²⁵։ Աղիս եզրը պարզ հոմանիշներ ունի հայերէնում, բայց եւ այնպէս, եթէ այս համեմատութիւնները ճիշտ են, ապա կարելի է կարծել, որ հնագոյն հայկական ընտանիքի կառուցուածքի վրայ եղել է նաեւ խուռական ազդեցութիւն²⁶։

Կան նաև հայ-խուռական անուանարանական ընդհանրություններ: Ղափանցեանը ներկայացրել է խուռերէնից հայերէնին անցած մի շարք յատուկ անուններ, որոնցից, բայտ Ջահուկեանի, քիչ թէ շատ հաւանական կարող են լինել հետեւեալները՝ Ակիթ-Akitta/i, Արոիթ-Arditi, Բութ-Putu: Բացառիկ հետաքրքրութիւն է ներկայացնում այն, որ ազգային աւանդութեան մէջ հայոց նախահայր Հայկի երեք որդիներից երկրորդի խուռ անունը դիտւում է որպէս խուռիների անուանադիր նախնի²⁴: Ինքը, այս անունը նոյնական է խուռիների ցեղանուն հետ (սեպագիրը նշաններ չունի օի համար՝ այն հաղորդուել է ուով եւ սեպագիրը hurrin հնչել է մօտաւորապէս խո՞ոն, որը հայերէնում կանոնաւոր կերպով դարձել է խոո, հմմտ.՝ այդ ցեղանուն երբ. hōrī, յուն. choraios ձեւերը), որն իր հերթին համադրւում է խուռաուարտական huradi՝ ռազմիկ, պահնորդ բառի հետ²⁵: Այսպիսով, հայոց ազգածագման աւանդութեան մէջ պահպանուել են յիշողութիւններ խուռիների վերաբերեալ, բայց ներառուած Հայկեանների տոհմի, եւ ոչ օտար ցեղերի մէջ: Սա թերեւս կարող է մեկնաբանուել խուռիների որոշ խմբերի՝ հայերի մէջ ձուլուելու փաստով:

խուռական առասպելաբանութեան մէջ կենտրոնական տեղ էր գրաւում ամպրոպի աստուած Թեշուբը (Teššub, համապատասխանում է ուրարտական Teišebaին): Ուշ-խեթական դարաշրջանում՝ Ք.ա. 1400ից յետոյ նա գերագոյն դիրք էր գրաւել նաեւ ինքնական Կայսրութիւնում: Յատկանշական է, որ ինքնական Կայսրութեան եւ խուռերէնի անհետացումից շատ դարեր յետոյ՝ Ք.ա. Ը-է. դդ. այդ դիցանունամբ կազմուած խուռական արքայանուններ են յիշուում Հայկական Լեռնաշխարհի հարաւում՝ Շուբրիա երկրում եւ մերձակայքում (Hu-Teššub, Ik-Teššub, [...]gi-Teššub եւն.)²⁶: Դա ցոյց է տալիս խուռերէնի գոյատեւումը այդ երկրամասում եւ նրա՝ ամպրոպի աստուծու պաշտամունքի մի նշանաւոր կենտրոն լինելը: Շուբրիան համապատասխանում է յետագայ Հայկական Մասունի շրջանին՝ հայոց դիւցազնավէպի Մասնայ Մուերի հայրենիքին: Դիւցազնավէպում Մասունը հիմնում են Մանասարը եւ նրա երկուորեակ եղբայր Բաղդասարը, Տիգրիս գետի մի վտակի ափին: Ըստ Մանուկ Աբեղեանի մանրամասն հիմնաւորման, Մանասարը՝ դիւցազնավէպի հերոսների գէնքի՝ կայծակի թրի առաջին տէրը, ամպրոպի աստուծու մի կերպարն է²⁷: Յատկանշական է, որ Թեշուբը եւս երկուորեակ է՝ նա յղացւում է իր եղբայր Թաշմիշուի եւ Տիգրիս գետի հետ միասին: Ըստ այդմ, Մանասարը, որ իր երկուորեակ եղբոր հետ հիմնում է Մասունը Տիգրիսի մի վտակի ակունքներում, փաստօրէն ուշ վիպական տարբերակն է տեղի հին ամպրոպային աստուծու՝ Շուբրիայի Թեշուբի²⁸: Նոյնիսկ թւում է, թէ Թեշուբ/Թէշէբայի անուան մի հեռաւոր արձագանգը պահպանուել է Մասունի եւ Մուշի յարակից շրջանների հայոց բանահիւսութեան մէջ: Այդպէս կարող է մեկնաբանուել աստուծոյների եւ մշեցիների սերունդներով բնակեցուած Իրինդ գիւղում բանահաւաք Ռ. խաչատրեանի կողմից 2008ին գրանցուած մի երգի կրկներգը՝ «Թեշիբ, Թեշիբ, Թեշիբ, նայի»²⁹:

Թեշուբի պաշտամունքի հետքեր կարելի է տեսնել նաեւ Հայկական Լեռնաշխարհի այլ շրջաններում, որտեղ բազում հնագոյն անուանումներ, նաեւ խուռական ծագման, անցել են հայերէնին: Թեշուբի պաշտամունքի կենտրոնները յայտնի են սեպագիր Kum- արմատով անուանումներով (Kummi,

Kummiya): Հայոց գերագոյն Արամազդ աստծու - որն ի թիւս այլոց նաեւ ամպրոպային յատկանիշներ ունէր - պաշտամունքի կենտրոնն էր Անի-Կամախը, որը խեթական ժամանակներում յայտնի էր որպէս Kummaha, եւ ամպրոպի աստծու պաշտամունքի մի նշանաւոր կենտրոն էր: Սա ցոյց է տալիս, որ Արամազդը տեղի Թեշուրի մի ժառանգորդն էր³⁵: Կումմային՝ ներկայիս Գիւմրին, թերեւս նոյնպէս կապուած է Թեշուրի առասպելների հետ³⁶:

Թեշուրի գլխաւոր հակառակորդներից էր քարէ հրէշ Ուլլիկումմին (Ullikummi, որը յաճախ մեկնաբանուած է որպէս «Կումմի քաղաքը կործանող») ինչը, ամենայն հաւանականութեամբ, միայն կեղծ՝ ժողովրդական ստուգարանութիւն է³⁸: Այս անունը, որտեղ -mmiս կարող է խուռական անունը լինել (տե՛ս՝ վերեւում), շատ է յիշեցնում ուրարտական աղբիւրների մերձեւ-ւանեան Ueliku-ni/hi երկրի անուանումը (niս եւ hiս ուրարտական անուններ են), որը հին հայկական Գեղարքունին է (յետագայում՝ Գեղարքունիք, Հայերէնին բնորոշ w>q զարգացմամբ): Հենց Uelikuni երկրի տարածքներում են կենտրոնացած հնագոյն Հայաստանի հանելուկային վիշապ քարակոթողները, եւ կարելի է ենթադրել, որ այդ տեղանունը, ի վերջոյ, կապուած է հին առասպելական քարէ հրէշի անուան հետ³⁹:

Կարծիք կայ, որ հայկական առասպելական արալէգենդի (այլ կերպ՝ առլէգ, յառլէգ) անուանումը խուռական է³⁷, բայց այն միանգամայն պարզ եւ ճշգրիտ բացատրուած է հայերէնով, իսկ խուռական մեկնաբանութիւնը կամայական է³⁸:

ՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ՀԻՆ ԱՆԱՏՈՒԼԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Հին անատոլիական լեզուները երբեմն կոչուած են նաեւ խեթալուական լեզուներ: Դրանք են՝ խեթերէնը (Hittite), պալայերէնը, լուվերէնը՝ սեպագիր եւ գաղափարագրային ձեւը (hieroglyphic)՝ տարբերակներով, ապա՝ աւելի ուշ աւանդուած լիկիերէնը, լիդիերէնը, կարիերէնը³⁹: Սրանցից խեթերէնը, պալայերէնը եւ լուվերէնն են, որ տարածուած են եղել Հայկական Լեռնաշխարհի մերձակայքում, իսկ միւսները խօսուել են աւելի արեւմտեան շրջաններում: Հնագոյն խեթական անուանումներն այլալեզու սեպագիր աղբիւրներում ի յայտ են գալիս Բ.ա. Բ. հազարամեակի վերջից, իսկ խեթական գրութիւնները՝ Բ.ա. ԺԶ. դարից: Խեթական Կայսրութիւնը, Խաթուաս կենտրոնով (ժամանակակից Անկարայից ոչ-հեռու) տարածուած է եղել Հայկական Լեռնաշխարհից արեւմուտք, ընդգրկելով Կապադոկիան:

Սովորաբար այդ լեզուները դիտուած են իբրեւ հնդեւրոպական լեզուախմբի մի առանձին, միւսներից բաւական հեռու մի ճիւղ: Ըստ ամերիկեան լեզուաբան է. Ստարտեւանտի վարկածի, անատոլիական եւ միւս հնդեւրոպական լեզուների մայր լեզուն՝ նախահնդխեթերէնը սկզբից բաժանուել է երկու ճիւղի՝ անատոլիական եւ հնդեւրոպական: Առաջինի ժառանգներն են վկայուած անատոլիական լեզուները, իսկ երկրորդը, նշանակալիւթին աւելի ուշ, նորից ճիւղաւորուել է, որի հետեւանքով սկիզբ են առել միւս բոլոր հնդեւրոպական լեզուները (այս վարկածը, թէ՛ եւ ներկայումս բաւական տարածուած, բայց միարժէքօրէն ընդունուած չէ)⁴⁰:

Հայերէնի եւ խեթերէնի ընդհանրութիւնների վերաբերեալ առաջին աշխատութիւնները գրուել են Ն. Մարտիրոսեանի, ապա՝ Ղափանցեանի կողմից⁴¹։ Յետագայում այդ հարցին անդրադարձել են այլ հեղինակներ եւս, որոնցից առաւել արժանաշիշատակ է Զահուկեանը։ Հայոց լեզուի պատմութեան վերաբերեալ իր վերջին հիմնարար աշխատութեան մէջ Զահուկեանը ճշգրտում է հայերէնի եւ անատոլիական լեզուների յարաբերութեան եւ ընդհանրութիւնների հարցը, եւ ներկայացնում է առաւել հաւանական ընդհանրութիւնների մի շարք⁴²։

Հիմք ընդունելով այդ շարքը, հայերէնի՝ անատոլիական լեզուներից կատարուած հնարաւոր փոխառութիւններից յիշատակելի են հետեւեալները (եթէ յատուկ չի նշուում, ապա լատինական այբուբէնով ներկայացուում է խեթական բառը)՝ բրուտ-purut՝ կաւ, քմքիք-etri՝ ուտելիք, լախուր/ցնխուր-labhura՝ տերեւաւոր մի բոյս, խաղալ (չարժուել, արշաւել)-halai՝ շարժուել, խառն-harnamniya՝ խառնել, գրգռել, խողխողել-hulhuluya՝ կռուել, սպանել, հատել-hattai՝ հատել, տառելք (արագիլ)-tarla՝ մի թռչուն, փախչել-parh՝ հալածել, քշել, փշուր-pars՝ փշրել։

Զի բացառուում, որ խեթերէնում էլ փոխառութիւններ լինէին հայերէնից։ Եթէ այդպէս է, ապա հնագոյն հայերէնի կրողները պէտք է մինչեւ խեթերէնի ու խեթական կայսրութեան անկումը գտնուէին խեթերին հարեւան շրջաններում, այսինքն՝ Պատմական Հայաստանում եւ/կամ մերձակայքում։ Զահուկեանը հնարաւոր է համարում, որ հետեւեալ բառերը անատոլիական լեզուների անցած լինեն հայերէնից՝ հաւնել-han՝ դատարկել, պարպել, hawg-haz(z)ita՝ մի թխուածք, ալիք-լուվ. a(a)li՝ ծով (յատուկ անունների բաղադրիչ), արք (ըտըղ)-ešri՝ նոյն իմաստը, քլիք (եզր)-telipuri՝ շրջան, երկրամաս, լուծ-luzzi՝ կուռ, պարտադիր աշխատանք, խուղ-hila՝ բակ, փարախ, գոմ, հարկանել-barganu՝ ոչնչացնել, մատաղ-լուվ. Mantalli՝ զոհատեսակ, տաղ-taliya՝ ձայն տալ, հայցել (աստուածներին), փող-pulla՝ մի տեսակ աման։

Կարծիք կար, որ հայերէնի անատոլիական շերտը դալիս է համեմատաբար ուշ աւանդուած գաղափարագրային լուվերէնից, բայց ինչպէս նշում է Զահուկեանը, հայ-անատոլիական ընդհանրութիւնները գաղափարագրային լուվերէնի համապատասխան բառերի հետ յատուկ մերձակորութիւն չեն ցուցաբերում։ Այսպիսով, յիշեալ կարծիքը միայն մտահայեցողական է, հիմնուած այն տեսակէտի վրայ, որ հնագոյն հայերէնի կրողները յայտնուել են Հայկական Լեռնաշխարհում ուշ՝ խեթական կայսրութեան անկումից յետոյ։

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում հայ-անատոլիական ընդհանուր յատուկ անունների քննութիւնը։ Դրանցից առաւել յայտնի է հայերէն Մուշեղ անձնանունը, որն ակնյայտօրէն նոյնական է խեթ. Muršiliին՝ այդ անունով յայտնի են մի քանի խեթական արքաներ։ Յատկանշական է, որ հայոց հին վէպերում հանդէս եկող Մուշեղ սպարապետի առասպելականացած կերպարը եւս կապեր է դրսեւորում արեւմտափոքասիական՝ լիդիական Միւրսիլիոս (Muršili) յունական ձեւն է) արքայի առասպելական կերպարի հետ⁴³։

Գիտական գրականութեան մեջ շատ յաճախ նշուել է հայոց առասպելական Անգեղեայ Տօրքի (աղբիւրներում աւելի յաճախ Տուրք) եւ խեթալուվական ամպրոպի աստուած Tarhu(nt)ի (տարբերակ՝ Tarku), անունների նմանու-

թիւնը, սակայն որպէս Տորք ներկայացուող անունը, դաստիարակ ըստ ձեռագրերի, ամենայն հաւանականութեամբ, սխալ ձեւ է՝ ճիշտն է Տուրք, մի անուն, որն աւանդուած է հայոց մէջ⁴⁴։ Ըստ այդմ, այս համադրութիւնից թերեւս պէտք է հրաժարուել⁴⁵։ Ամենայն հաւանականութեամբ կապուած չեն նաեւ երբեմն որպէս հայ-լուսկական առնչութիւնների փաստարկ ներկայացուող հայերէն շանթ՝ կայծակ բառը եւ լուսկական Santa՝ աստծու անունը (վերջինս ժանտարտար, եւ ոչ շանթ-կայծակի աստուած էր)⁴⁶։

Հայկական Լեւոնաշխարհի հարաւի եւ արեւելքի (Վանայ եւ Սեւանայ լճերի շրջանի), այսինքն՝ խեթերի պատմական հողերից բաւական հեռու ընկած տարածքների որոշ հին անուանումների քննութիւնը ցոյց է տալիս, որ, ամենայն հաւանականութեամբ, այդտեղ եղել է խեթերէնին մօտ լեզուով խօսող բնակչութիւն։ Այս լեզուից կարող էին ծագել Սեւան, Սիւնիք տեղանունները, հմմտ.՝ խեթ.՝ šui-, šuna/i՝ աստուած>արեւի աստուած, šiwanni՝ աստուածային բառերը, Տեղեւրտական արեւի եւ լուսաւոր երկնքի աստծու՝ *dyau անունից (սեպագրիք Տն խեթերէնում սովորաբար ներկայացնում է s հնչիւնը)։ Յատկանշական են Սիւնիքի արեւ հիմքով տեղանունները, որոնց մէջ Արեւիս, Արեւիք, Արեւեաց տուն ձեւերը ցեղանուանական բնոյթ ունեն (որպէս «արեւեաններ»՝ արեւապաշտների ցեղ/երկիր, Սիւնիքի հաւանական թարգմանութիւնը)⁴⁷։ Դրանց պէտք է աւելացնել իշխել, իշխան կարեւոր մշակութային եզրերը (երկրորդը՝ նաեւ Սեւանի ձկան վերարբեայ), որոնք նոյնպէս, ամենայն հաւանականութեամբ, ծագում են այդ լեզուից (խեթ.՝ Isha'esh'a՝ տէր, իշխան)⁴⁸։

Ռեթական տեսք ունի հայոց առաջին մայրաքաղաք Արմաւիրի անուանումը։ Հին *Armawirah (Արմաւիր, սեռ. Արմաւրայ) առաջին մասի համար հմմտ.՝ Arma՝ լուսին, լուսնաստուած, յայտնի խեթերէնում, լուվերէնում, գաղափարագրային լուվերէնում, լիկերէնում ու լիդերէնում։ Երկրորդ մասը համադրելի է խեթերէն pir՝ տուն, կրօնական ոլորտում՝ աստծու տուն, տաճար բառերին (հայերէն ձեւը՝ Վիր վերջաւորութեամբ, հայերէնին բնորոշ զարգացման արդիւնք է․ այն մօտ է արմատի խեթականին եւ ոչ միւս անատոլիական ձեւերին՝ հմմտ.՝ լուվ. Parna՝ տուն)։ Ըստ աւանդութեան (Ռորենացի Ա.Ժ. Սերէոս Ա․), Արմաւիրը հիմնել է Հայկի թոռ Արամայիս/Արմայիսը։ Ակնյայտօրէն նոյնական Armais անունը, լուսնական հաղորդմամբ, յայտնի Արեւմտեան Փոքր Ասիայից՝ Լիկիայից⁴⁹, համարոււմ է անատոլիական «լուսին» բառի տեղական համարժէքը։ Յատկանշական է, որ լուսնաստուածը հին հայոց աւանդոյթում յիշոււմ է հենց Արմաւիրի առնչութեամբ՝ առասպելական արքայ Վաղարշակը Արմաւիրում կանգնեցնում է արեւի, լուսնի եւ իր նախնիների արձանները (Ռորենացի Բ.Բ.)։

Հնարաւոր է նաեւ հայոց Նոր մայրաքաղաքի՝ Երեւանի (ուլարտ. էրեբունի) անատոլիական ստուգաբանութիւնը։ Այդ առումով էրեբունի-Երեւանը համադրելի է խեթ. Arawa/arawanni՝ ազատ բառին, հմմտ.՝ խեթ. Arauwanna (տարբերակներ՝ Arawanna, Arawunna) քաղաքանունը, որպէս «Ազատ քաղաք»⁵⁰ (այի եւ նի հերթագայութիւնը բնորոշ է լեզուից-լեզու անցումներին՝ հմմտ. հայ. Եկեղիք, Անձիտ, որոնք համապատասխանում են լուսն. Ակիլիսենէ եւ ասուր. Էնզիտէ ձեւերին)։ Բառի արմատը համաանատոլիական է։ Յատկանշական է, որ արեւմտեան Փոքր Ասիայից՝ Լիկիայից յայտնի է Ereua քաղաքա-

նունը (յունարէն թարգմանուած որպէս «Ազատ քաղաք»), որը, հաշուի առնելով անուան յետագայ հնարաւոր փոփոխութիւնները, համեմատելի է էրեբու-նիի (ուրարտ. քն կարող է ընթերցուել Վ կամ Լ, իսկ վերջին -նին անանց է) եւ, առաւել չափով, Երեւանի հետ⁵¹։

Էրեբունիի անատոլիական լուվական մեկնարանութեան համար հեշտ է պատմական բացատրութիւն գտնել։ Քաղաքի հիմնադիր Արգիշտի առաջինը նշում է, որ նա այդտեղ վերաբնակեցրել է արեւմուտքից՝ Խաթէ եւ Ծուփանի (Մայաթիայի եւ Ծոփքի շրջաններ) երկրներից բերուած գերիներէի, որոնց էլ, կարծում են, ազատ է արձակել եւ դարձրել ամրոցի կայազօրը։ Այդ երկրների - որոնք յաճախ կոչուում են «նորիսեթական» կամ, աւելի նոր եզրով՝ «սիր-իսիսեթական» - բնակչութիւնը մեծ մասով լուվական էր։

Արմաւիրի անունը աւանդուած է համեմատաբար ուշ՝ յունական եւ հայ-կական աղբիւրներում։ Աւելի վաղ՝ ուրարտական դարաշրջանում Արմաւիրի տարածքը ներառուած էր նոյն Արգիշթի⁵² առաջինի հիմնադրած Արգիշթիիսի-նիլիի կազմում (Արմաւիրի կենտրոնը գտնուում է տարածքի արեւելեան, իսկ Արգիշթիիսիիինը՝ արեւմտեան բլուրի վրայ, իրարից մի քանի կիլոմետր հե-ռու)։ Արմաւիրի բլուրի վրայ, հզօր ուրարտական շինութիւններից գատ, բա-ցայայտուում է նախաուրարտական դարաշրջանի մի սրբազան տաճարային համալիր⁵³։ Պաշտամունքային կառոյցներ կային նաեւ ուրարտական դարաշր-ջանի Արմաւիրում⁵⁴, եւ կարծիք կայ, որ Արմաւիրի նշուած հայկական տաճա-րական համալիրը ձեւաւորուել է բլրի վրայ եղած ուրարտական տաճարի ոչ-մեծ վերակառուցման հետեւանքով⁵⁵։ Ընդհանրապէս, Արմաւիրը կարող էր ձեւաւորուել պաշտամունքային համալիրի շուրջը (թերեւս նուիրուած լուս-նաստծուն)։ Ոք⁵⁶ ր պիտի լինէին Արմաւիրին անուն տուած անատոլիացիները։ Աղբիւրներից դատելով, Արմաւիրի բլուրը կառուցապատել է Արգիշթի Ա-ի որդի Սարգուրի Բ-ը (Ք.ա. Ը.դ.)։ Իսկ խեթերէնը, Խեթական կայսրութեան անկումից (Ք.ա. ԺԲ.դ. սկիզբ) մի քանի դար անց, ուրարտական ժամանակ-ներում, արդէն վաղուց մեռած պիտի լինէր։ Այսինքն, Արմաւիրի անունը, հա-ւանաբար պէտք է ծագէր այդ տարածքներում վաղուց ի վեր եղած անատոլ-իական խեթերին մօտ բնակչութեան լեզուից։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Գէորգ Զահուկեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն. Նախադրային Երջան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ.*, 1987։

² Ներկայացնեմք ճշգրտման միայն մէկ օրինակ. Ղափանցեանի կողմից նշուած եւ Զահուկեանի կողմից ընդունուած ու բազմիցս յղուած հայերէն գորգ-խեթ. Kurka՝ ծածկոց համապատասխանութիւնը պէտք է մերժուի, քանի որ, ինչպէս պարզուել է նորայայտ գրութիւններից, խեթերէն բառը նշանակում է ոչ թէ «ծածկոց», այլ «քուռակ», եւ ի վերջոյ, ստուգաբանօրէն կապուած է հենց այդ բառի հետ (Հ. Հմայակեան, «Ղափանցեանը եւ Խեթագիտութիւնը». բանասիրական գիտութիւնների թեկ-նածուի գիտական աստիճանի հայցման ատենախօսութիւն (ձեռագիր). Նաեւ՝ ըստ J. Puhvel, *Hittite Etymological Dictionary. Vol. 4*, Berlin-New York-Amsterdam, Mouton de Gruyter, 1997, էջ 267)։

³ Հայուրարտական աւելցութիւնների վերաբերեալ ամենալիակատար աշխատանքը մնում է Զահուկեանի «Ուրարտերէնը եւ Հայերէնը» յօդուածը՝ Բաքէէ Առաքել-

- եան, Գէորգ Զահուկեան, Գաղիկ Սարգսեան, *Ուրարտու-Հայաստան*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1988, էջ 127-168:
- ⁴ V.V. Ivanov, "Ob Otnoshenii Khattskogo Yazika K Severozadnokavkazskim Yazikam" (*Խեթերէնի եւ հիւսիսարեւմտակովկասեան լեզուների առնչութեան մասին*), *Drevniyaya Anatoliya* (Հին Անատոլիա), Մոսկուա, Nauka, էջ 26-59:
- ⁵ Զահուկեան, *Հայոց*, էջ 321:
- ⁶ Ա. Պետրոսեան, «Հայկական Աւանդական Դրամայի Ակունքների Շուրջ», *Պատմա-բանասիրական Հանգչա*, 2006, 2, էջ 262:
- ⁷ Ա. Պետրոսեան, «Մոուզարանութիւններ», *Հանգչա Ամսօրեայ*, 2007:
- ⁸ V.G. Ardzinba, "K Istarii Kul'ta Jeleza I Kuznechnogo Remesla (Pochitanie Kuznitsy u Abkhazov)" (*Երկաթի եւ դարձնի արհեստի պաշտամունքի պատմութեան մասին. դարբինների պաշտամունքը արխազների մօտ*), *Drevniy Vostok: Etnokul'turnye Svyazi* (Հին Արեւելք. ազգամշակութային կապեր), Մոսկուա, Nauka, 1988, էջ 282:
- ⁹ Քսենոփոն, *Անաբազիս*, թրգմ.: Սիմոն Կրկեաշարեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1970, IV, 4, 3:
- ¹⁰ I. Singer, "Who Were the Kaška?", *Phasis*, 2007, 10/1, էջ 166-181:
- ¹¹ Այս հարցերի վերաբերեալ տե՛ս՝ A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Journal of Indo-European Studies Monograph 42, Washington DC, Institute for the Study of Man, 2002, էջ 144:
- ¹² *Խուրիերէնի վերաբերեալ տե՛ս օրինակ՝* I. M. Diakonoff, *Hurrisch und Urartäisch (Խուրիերէնը եւ ուրարտերէնը)*, Munich, R. Kitzinger, 1971: նաեւ՝ M.L. Khachikyan, *Khuritskiy I Urartskiy Yaziki (Խուրիերէն եւ ուրարտերէն լեզուները)*, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1985: նաեւ՝ G. Wilhelm, "Hurrian," *The Cambridge Encyclopedia of World's Ancient Languages*, Cambridge, State University of New York, էջ 95-118:
- ¹³ Այս հարցի վերաբերեալ տե՛ս յատկապէս՝ I.M. Diakonov, S.A. Starostin, "Khurrito-Urartskii I Vostochnokavkazskie Yaziki" (*խուրի-ուրարտերէնը եւ արեւելակովկասեան լեզուները*), *Drevniy Vostok: Etnokul'turnye Svyazi*, Մոսկուա, Nauka, 1988: Ըստ Զահուկեանի, խուռուրարտերէնը, հիւսիսկովկասեան եւ հնդեւրոպական լեզուները մտնում են լեզուական աւելի մեծ խմբի՝ նոտոգրատիկ ամբողջութեան մէջ (G.B. Djhaukian, *Vzaimootnoshenie Indoevropeyskikh, Khurrito-Urartskikh I Kavkazskikh Yazikov* (Հնդեւրոպական խուռա-ուրատական եւ կովկասեան լեզուների փոխառնչութիւնը), Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1967): Այս կարծիքն ընդունելու չի գտել մասնագէտների լրջանում): Հետաքրքիր է, որ վերջերս նման մի տեսակէտ է արտայայտուել Ա. Ֆուրնէի եւ Ա. Բոմհարդի կողմից, ըստ որի խուրիուրարտերէնը հնդեւրոպական լեզուների մի հեռւոր ազգակիցն է (A. Fournet, A. Bomhard, *The Indo-European Elements in Hurrian*, La Garenne Colombes/Charlston, 2010), որը խտորէն քննադատուել է (A. Kassian, "Review of: The Indo-European Elements in Hurrian, by Arnaud Fournet & Allan R. Bomhard (2010)" *Journal of Language Relationship*, No. 4 (2010), էջ 199-206:
- ¹⁴ Գրիգոր Ղափանցեան, *Հայոց լեզուի Պատմութիւն. Հին Շրջան*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1961, էջ 104-130:
- ¹⁵ «Հեղինակի՝ այս թեմային նուիրուած վերջին աշխատանքներից տե՛ս՝ J. Greppin, "Substratum in Armenian", *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies* 1, 2006:
- ¹⁶ I.M. Diakonov, *Yaziku Drevney Peredney Azii* (Հին Առաջւոր Ասիայ լեզուները), Մոսկուա, Nauka, 1967, էջ 359: նաեւ՝ I. M. Diakonoff, "Hurro-Urartian Borrowings in Old Armenian", *Journal of the American Oriental Society*, 1985, 4:
- ¹⁷ N.A. Mkrtchyan, "Substratnye Nazvaniya Rasteniy V Armyanskom Yazike" (*Բոյսերի հիմնանունները հայերէնի մէջ*), *Drevniy Vostok*, 3, Երևան, 1983:

- ¹⁸ Khachikyan, էջ 54-56.
- ¹⁹ Ջահուկեան, Հայոց, էջ 422-427:
- ²⁰ Պէշաք է նշել, որ այն չի կարող ճշգրիտ պատկերացում տալ հայերէնի՝ խուռերէնից կատարուած փոխառութիւնների վերաբերեալ, որովհետեւ դրանց մի մասը կարող է հայերէնին անցած լինել խուռերէնին ազգակից ուրարտերէնից:
- ²¹ N.V. Arutyunyan, *Korpus Urartskikh Klinobraznykh Nadpisey* (Ուրարտական բեւեռագիր արձանագրութիւնների լիակատար ժողովածու), Երևան, ՀՀ ԳԱ, 2001, էջ 445:
- ²² Հմմտ. օրինակ՝ ուրարտ. *puṛa*, խուռ. *purame* կամ *purammi* «ստրուկ» (Khachikyan, էջ 48):
- ²³ I. M. Diakonoff, *The Pre-History of the Armenian People*, Delmar/New York, 1984, էջ 186, n. 28:
- ²⁴ G. Bonfante, "The Armenian Family Terminology", *Միջազգային Հայերէնագիտական հիմնաժողով. Ջեկուցումներ*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 26-30:
- ²⁵ Ա. Պետրոսեան, «Հայկ Նահապետը Համեմատական Առասպելաբանութեան Լոյսի Տակ. Շնորհ ի վերուստ. Առասպել, Մէս, Պատմութիւն, Բոզուածների Ժողովածու Նուիրուած Սարգիս Թարութիւնների Մենդեան 80Ամեակին», Երևան, Վեյսա Պրինտ 2008, էջ 12. նաեւ՝ A. Y. Petrosyan, "Forefather Hayk in the Light of Comparative Mythology", *Journal of Indo-European Studies*, Vol. 37, 2009, Number 1 & 2, էջ 157:
- ²⁶ Նկատենք, որ Հ. Մարտիրոսեանը հայերէնի քնիկ արմատների իր հիմնարար ստուգաբանական բառարանում հաւանական է համարում Դիակոնովի տեսակէտը (H. K. Martirosyan, *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon* (Leiden Indo-European Etymological Dictionary Series, 8), Leiden/Boston, Brill, 2010 էջ 25):
- ²⁷ Խոռի՝ որպէս խուռինների էպոնիմի վերաբերեալ տե՛ս՝ Ղափանցեան, Հայոց, էջ 114-115: նաեւ՝ Գէորգ Ջահուկեան, «Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» Առաջին Գրքի Անձնանունների Լեզուական Աղբիւրները», *Պատմաբանական Հանդէս*, 1981, 3, էջ 55: Հայկի որդիների զրոյցների առասպելաբանական ակունքների եւ պատմական՝ չալ-խուռախուռարտական կապերի արտացոլումների վերաբերեալ՝ Petrosyan, *The Indo-European*, էջ 179. նաեւ՝ Ա. Պետրոսեան, Հայոց Ազգածագման Հայրեր, Երևան, Նորավանդ, 2006, էջ 61-64:
- ²⁸ G. Vil'khel'm, *Drevniy Naarod Khurrity* (Խուռինները. հին ժողովուրդ), Մոսկուա, Nauka, էջ 21. նաեւ՝ Petrosyan, *The Indo-European*, էջ 179-180:
- ²⁹ I. Gelb, *Hurrians and Subarians*, Chicago, University of Chicago Press, 1944, էջ 82:
- ³⁰ Մանուկ Աբեղեան, Երկեր, Հոր. Ա. ՀՍՍՀ ԳԱ Հրատ., էջ 414-418:
- ³¹ Petrosyan, *The Indo-European*, էջ 21, 65:
- ³² ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Ռ. Խաչատրեանի Ֆոնդ, FRI. 3848: Վրացական եւ հայկական հին երգերի կրկնեղբերում պահպանուած հինադարեան դիցանունների վերաբերեալ տե՛ս՝ A.S. Svanidze, "Nazvaniya Drevnevostochnykh Bogov V Gruzinskikh Pesnyakh" (Հինարեւելեան դիցանունները վրացական երգերում), *Vestnik Drevney Istori* (Թաներ հին աշխարհի պատմութեան), 1937, 1, էջ 87-93. նաեւ՝ G.A. Kapantsyan, *Istoriko-Lingvisticheskie Raboty* (Պատմա-լեզուաբանական աշխատութիւններ), T. 1, Հայկ. ՍՍՀ ԳԱ, էջ 295 f. նաեւ՝ Ա. Պետրոսեան, Արամազդ. Կերպար, Պաշտամունք, Նախատիպեր, Երևան, Վան Արեան, 2006, էջ 57-58:
- ³³ Պետրոսեան, Արամազդ, էջ 11:
- ³⁴ Ա. Պետրոսեան, «Կուսմային Հայկական Լեռնաշխարհի Հնագոյն Առասպելների Համատեքստում», *Գիտական Աշխատութիւններ VII. Շիրակի Հայագիտական Հետազոտութիւնների Կենտրոն, Գիւմրի, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ.*, 2004, էջ 5-9:

- ³⁶ E. Laroche, "Glossaire de la Langue Hourrite", *Revue Hittite et Asiatique*. T. XXXIV-XXXV, Paris, 1976-77, էջ 279.
- ³⁷ A. Petrosyan, "Otrajenie Indoevropskogo Kornya *Wel- V Armyanskoy Mifologii" (Հինգերտական *Wel- արմատի արտացոլումը հայկական առասպելաբանության մեջ), *Հրաբեր Հասարակական Գիտությունների*, 1987, 1, էջ 56-70; Petrosyan, *The Indo-European*, էջ 81.
- ³⁸ Այդ կարծիքն են պաշտպանել Ա. Սէյաը, Ղափանցեանը, Դիակոնովը, տե՛ս օրինակ՝ I.M. Diakonov, "K Voprosu O Simvole Khaldi" (*Պարզիկի խորհրդանշի հարցի մասին*), *Drevniy Vostok*, 4, էջ 94:
- ³⁹ Գեորգ Զահուկեան, «Նոր Տուեախեր Հայոց Նախաքրիստոնէական Կրօնի Մասին», *Պատմարանասիրական Հանդէս*, 1992, 1, էջ 18. նաեւ՝ Ս. Եարուխանեան, *Հայ Առասպելաբանություն*, Պէյրուի, Համազգային Վահէ Սեթեան Տպարան, 2000, էջ 383-384; Արայէզների խուլիական մեկնաբանության անհաւանական լինելու եւ ալ ժողովուրդների առասպելներում համանման կերպարների վերաբերելու տե՛ս՝ Petrosyan, *The Indo-European*, էջ 88, եղած կարծիքների յղմամբ եւ քննարկմամբ:
- ⁴⁰ Այս լեզուների վերաբերելու տե՛ս օրինակ՝ Բ. Վոսկինսկի եւ Գ. Մելլերտի թղուածները *The Cambridge Encyclopedia of World's Ancient Languages* յղուած հանրագիտարանում:
- ⁴¹ «Հնդ-իսթական» վարկածի պատմության, եղած տեսակէտների եւ յարակից հարցերի շուրջ տե՛ս՝ R. Drews (ed.), *Greater Anatolia and the Indo-Hittite Language Family*, Journal of Indo-European studies Monograph No 38, Washington D. C., Institute for the Study of Man 2001:
- ⁴² Հեղինակի ճշգրտուած մօտեցումները համակարգուած ձեւով տե՛ս՝ նրա վերջին աշխատության մէջ՝ Ղափանցեան, *Հայոց*, էջ 147:
- ⁴³ Զահուկեան, *Հայոց*, էջ 311. նաեւ նոյնի՝ *Հայերէնը եւ Հնդգերտական Հին Լեզուները*, Երևան, ՀՍՄՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 123 հտեւ:
- ⁴⁴ Petrosyan, *The Indo-European*, էջ 147:
- ⁴⁵ Արեղեան, *Երկեր*, Հտր. Հ, Երևան, ՀՍՄՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 154-158:
- ⁴⁶ Ա. Պետրոսեան, «Գրախօսութիւն Ա. Ազոնց, *Երկեր*, Հտր. Ի», *Պատմարանասիրական Հանդէս*, 2006, 3, էջ 283-284:
- ⁴⁷ Ն. Տիրացեան, «Իււրշա եւ Մարդուկ Աստուածների Պաշտամունքը Արարատեան Դաշտում», *Պատմարանասիրական Հանդէս*, 2006, 2, էջ 191-192:
- ⁴⁸ Պետրոսեան, *Հայոց Ազգածագման*, էջ 47. նաեւ՝ նոյնի՝ «Խեթերէնի Հետքեր Հայկական Լեռնաշխարհի Արեւելքում եւ Հարաւ-Արեւելքում. Պալլեան Զօրութեամբ...», *Յօդուածների Ժողովածու Նուիրում Բորիս Պետրոսեանի Ծննդեան 100 Ամսակի*, Երևան 2010, Վերա Պալլեան, էջ 65-77. նաեւ՝ A. Y. Petrosyan, "The Eastern Hittites in the South and East of the Armenian Highland?" *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies* IV, 1 (2009), էջ 63-72:
- ⁴⁹ Այս բառերը յաճախ համարուել են իրանական, բայց մանրամասն քննութիւնը ցոյց է տալիս նրանց անատոլիական ծագումը (Ա. Եովհաննիսեան, *Հայերէնի Իրանական Փոխառութիւնները*, Երևան 1990, էջ 224-225):
- ⁵⁰ P. Howkin ten Cate, *The Luwian Population Groups of Lycia and Cilicia Aspera During the Hellenistic Period*, Leiden, Brill, 1961, էջ 132: Նոյն աեւուր յայտնի է եւ յունա-եգիպտական աւանդոյթում, որի վերաբերելու, այս աեւելութեամբ, տե՛ս՝ Petrosyan, *The Indo-European*, էջ 75, 100, 182: Հայ եւ լիկիական աեւուների աեւելութեան վերաբերելու տե՛ս՝ Զահուկեան, «Մովսէս Պորեանցու», էջ 53:
- ⁵¹ E. Laroche, "Hittite arawa- "libre," *Latomus: Revue d'Etudes Latines*, Collection Latomus. Vol. 45, Hommage à George Dumézil, Bruxelles, 1960, էջ 124:

⁵¹ Պետրոսեան, Հայոց Ազգածագման, էջ 34. նաև նոյնի՝ «Երեւան Տեղանուան Մագման Շուրջ», Գիտական Յոգուածներ ժողովածու, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 2006, էջ 164-171, աղբիւրների յղմամբ եւ եղած կարծիքների քննութեամբ:

⁵² Սեպագրում գրում է թ-ով, բայց հայերէն երբեմն գրում են նաև տ-ով:

⁵³ I. Karapetyan, J. Khachatryan, A. Kanetsyan, "Dourartskiy Armavir" (Մինչուրարտական Արմավիր), Պատմաբանասիրական Հանգչա, 2004, 2, էջ 268-274:

⁵⁴ Ն. Տիրացեան, Արգիշթի/տիւրի/իւրի Հոգեւոր եւ Աշխարհիկ Կառոյցների Շուրջ Ըստ Սեպագիր Արձանագրութիւնների. Հայկական Քաղաքակրթութիւնը Հնագոյն Ժամանակներից Մինչև Բրիտանեկութեան Ընդունումը, ՀՀ ԳԱԱ Հրատ., Երեւան 2000, էջ 39-42. նաև՝ I. Karapetian, Armavir: De l'Ourartu à l'Arménie. Les Douze Capitales d'Arménie, Marseille, Somogy, 2010, էջ 70:

⁵⁵ G. Tiratsyan, Kul'tura Drevney Armenii (Հին Հայաստանի մշակոյթը), Երեւան, Հայկ-ՍՍՀ ԳԱ, 1988, էջ 100-101:

THE CONNECTIONS BETWEEN ARMENIAN AND ANCIENT LANGUAGES OF ASIA MINOR (Summary)

ARMEN PETROSYAN

The article is about common words found in the Armenian and Hattic, Hurrian, Hittite, Luvian. These languages which were used in the south and west of the Armenian Highland disappeared by the end of the 2nd Millennium BC.

The relation and influence of the Armenian with the neighbouring ancient languages of the Armenian Plateau has been at the center of attention of linguists for quite some time now. The most significant researches have been conducted by Krikor Ghapantsian, Igor Diakonov and Gevork Djahukian.

Nonetheless, the author notes that a considerable amount of new material has become available due to studies during the last two decades, which enable him to examine, suggest corrections, analyse and eventually add to the already existing material.

In this article the author examines a number of specific words which bear cultural connotations or are related to deities. Petrosyan's comparative study leads him to conclude that traces of names Teššub/Teišeba (the Hurrian-Urartian god of storm), and its opponent the dragon Ullikummi may be found in Armenian legends and adds that the Armenain legendary figure Tork might have a Huttian-Luvian origin.